



ՆԱՅԱՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

0010, ՆՏ, ք. Երևան, Զարյան 7-2
Նեո.՝ (+374 10) 600 701, 600 704
Նեոապարճեն՝ (+374 10) 600 703
Էլ-փոստ՝ info@advocates.am
Կայք՝ www.advocates.am

Հաստատված է՝

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
05.05.2020թ. թիվ 9/5-Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 23.01.2020թ. ԹԻՎ 18-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՍՏԵՂԾՎԱԾ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Ձ Ե Կ ՈՒ Յ Ց

(2018թ. հունվարի 1-ից առ 2020թ. փետրվարի 10-ն
ընկած ժամանակահատված)

Զեկույցը կազմել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) նախագահի 23.01.2020 թվականի թիվ 18-Ա որոշմամբ ձևավորված Փաստաբանների իրավունքների խախտումներն արձանագրող աշխատանքային խումբը (**այսուհետ՝ Աշխատանքային խումբ**)՝ փաստաբանների մասնագիտական գործունեությունը խոչընդոտող, ինչպես նաև փաստաբաններին սպառնալու և վիրավորելու դեպքերն արձանագրելու և Պալատի խորհրդին ներկայացնելու նպատակով և ամփոփվել (խմբագրվել) է Պալատի խորհրդի կողմից:

Աշխատանքային խմբի կազմը՝

Համակարգող՝

- 1) ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Գայանե Դեմիրջյան (արտոնագիր № 1881):

Անդամներ՝

- 2) փաստաբան Անի Համբարձումյան (արտոնագիր № 1882),
- 3) փաստաբան Արմեն Հակոբյան (արտոնագիր № 2094),



- 4) փաստաբան Նաիրա Ալավերդյան (արտոնագիր № 2571),
- 5) փաստաբան Ալեքսանդր Կոչուբան (արտոնագիր № 2606):

Սույն զեկույցի անբաժանելի մասն է հանդիսանում 2018թ. հունվարի 1-ից առ 2020թ. փետրվարի 10-ն ընկած ժամանակահատվածում փաստաբանների իրավունքների պաշտպանության հետ կապված ՀՀ փաստաբանների պալատի կողմից կատարված գործողությունների մասին Պալատի աշխատակազմի 17.02.2020թ. տեղեկանքը (**այսուհետ՝ Տեղեկանք**):

* * *

1. Նախաբան.

Փաստաբանական գործունեության անկախության և փաստաբանի պաշտպանության ապահովման անհրաժեշտությունն իրավական պետության կարևոր հենասյուններից է: Հենց այդ պատճառով է, որ պետությունը պոզիտիվ պարտավորություն է կրում իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորել անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը (**ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդված**):

«Փաստաբանության մասին» օրենքի 21-րդ հոդվածում ամրագրվել են փաստաբանի գործունեության երաշխիքները, որոնց ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Օրենսդիրը ևս ընդգծել է փաստաբանի, որպես անկախ գործունեություն ծավալող սուբյեկտի դերը հասարակությունում, ընդ որում՝ այդ անկախությունն ապահովելու պարտավորությունը կամ այլ կերպ՝ փաստաբանական գործունեությանը միջամտելու արգելքը սահմանված է բոլորի՝ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցների), այդ թվում նաև դատական մարմինների համար:

Ավելին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 332.2-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է սահմանված մի դեպքում պաշտոնատար անձի կողմից փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու, մյուս դեպքում՝ ցանկացած անձի կողմից փաստաբանի նկատմամբ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, զույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի համար՝ կապված նրա լիազորությունների իրականացման հետ:

Այսինքն՝ օրենքով սահմանվել են մի շարք երաշխիքներ, այդ թվում՝ քրեական պատասխանատվության տեսքով, որոնք ուղղված են



փաստաբանական գործունեության անկախության պաշտպանությանը:

Բացի վերոնշյալ երաշխիքներից, թե՛ օրենքով և թե՛ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019թ. որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքով (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) փաստաբանների համար սահմանվել են նաև որոշակի պարտականություններ՝ փաստաբանի անկախության ապահովման համար:

Մասնավորապես՝ Կանոնագրքի 2.1-րդ կետի համաձայն՝ *Իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս փաստաբանը պետք է անկախ լինի, այսինքն՝ ազատ ազդեցություններից և, հատկապես, այնպիսի ազդեցություններից, որոնք կարող են ծագել փաստաբանի անձնական հետաքրքրություններից կամ արտաքին ճնշումից և որը կարող է բացասաբար ազդել վստահորդի գործի վրա: Փաստաբանը պետք է խուսափի իր անկախության թուլացումից և ուշադիր լինի իր մասնագիտական չափորոշիչների հանդեպ, որպեսզի նրանք չհարմարեցնի դատարանին կամ երրորդ անձանց գոհացնելու համար:*

Այս անկախությունը անհրաժեշտ է նաև ոչ վիճելի դեպքերում, և դատավարությունների ժամանակ:

Իր վստահորդի շահերը ներկայացնելիս փաստաբանը պետք է զերծ մնա այնպիսի գործողություններից, որոնք փաստաբանին կարող են նույնացնել իր վստահորդի հետ: Փաստաբանի կողմից իր մասնագիտական պարտականությունների շրջանակում հօգուտ վստահորդի շահերի իրականացված գործողությունները չեն կարող համարվել վստահորդի հետ նույնացում:

Փաստաբանի անկախությունն ընդգծվել է նաև ՄԱԿ-ի «Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներում» (**այսուհետ՝ Սկզբունքներ**): Սկզբունքների 18-րդ կետի համաձայն՝ **«Իրենց գործառույթների կատարման արդյունքում իրավաբանները չեն նույնացվում իրենց հաճախորդների կամ նրանց շահերի հետ»:**

Վերոնշյալ կարգավորումները հիմք են տալիս նշել փաստաբանական գործունեության հանրային իրավական բնույթի մասին: Այսպիսով՝ իրավաբանական օգնության ցուցաբերման ուղղությամբ փաստաբանական գործունեության իրականացումը հասցեագրված է ինչպես առանձին անձանց, այնպես էլ հասարակությանն ընդհանրապես:

Չնայած նրան, որ մասնագիտական պարտականության կանոններն ու օրենքներն ընդհանուր են բոլոր փաստաբանների համար, սակայն յուրաքանչյուր առանձին ոլորտում (քաղաքացիական, վարչական կամ քրեական)



փաստաբանական գործը հանրայնացնող փաստաբանն ունի իր ոլորտին բնորոշ առանձնահատկություններից բխող պարտականություններ:

Այսպիսով, փաստաբանական գործը հանրայնացման կամ ներկայացման պայմաններում փաստաբանները յուրատեսակ միջնորդներ են հանդիսանում դատական կամ գործադիր իշխանությունների և հասարակության միջև:

* * *

2. Ուսումնասիրության ուղղությունները.

Ուսումնասիրությունը կատարվել է հիմք ընդունելով ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի կողմից տրամադրված 17.02.2020թ. տեղեկանքը՝ 2018թ. հունվարի 1-ից առ 2020թ. փետրվարի 10-ն ընկած ժամանակահատվածում փաստաբանների իրավունքների պաշտպանության հետ կապված ՀՀ փաստաբանների պալատի կողմից կատարված գործողությունների մասին, ինչպես նաև համացանցում, զանգվածային լրատվության կայքերում տեղ գտած նյութերը, որի արդյունքում առանձնացվել են փաստաբանների իրավունքների խախտումների հետևյալ տարատեսակները՝

1. Պետական մարմինների կողմից փաստաբանների կամ նրանց ընտանիքների հանդեպ դրսևորած¹

- 1) վիրավորանք.
- 2) խոչընդոտում.
- 3) սպառնալիք.
- 4) անձեռնմխելիության խախտում:

2. Հանրության որոշ խմբերի կողմից փաստաբանների կամ նրանց ընտանիքների հանդեպ դրսևորած²

- 1) վիրավորանք.
- 2) խոչընդոտում.
- 3) սպառնալիք.

¹ <https://armtimes.com/hy/article/161816>

<https://arm.favl.am/?p=2139>

<http://www.aaeurop.com/?p=21288>

<https://armlur.am/808858/>

² <https://armeniasputnik.am/video/20190111/16698811/video-cucararnery-chein-toxnum-general-manveli-pastabany-herana.html>

<https://www.pastinfo.am/hy/news/2018/08/05/Ողբերոտ-Քոչարյանի-փաստաբաններին-սպառնում-են-իշխանական-օղակները-չեն-շտապում-արձագանքել/728631>

<https://168.am/2018/06/30/975367.html>



- 4) անձեռնմխելիության խախտում.
- 5) նույնացում վստահորդի հետ:

3. Փաստաբանի վարքագիծ³

- 1) առերևույթ փաստաբանի անվան, դերի վարկաբեկում.
- 2) փաստաբանի կողմից կատարված գործողություններ, որոնք վերջինիս առերևույթ կարող են նույնացնել վստահորդի հետ:

Իրավախախտումների առաջին տարբերակի դեպքում՝ փաստաբան-վստահորդ նույնացումը, փաստաբանի իրավունքների խախտումը տեղի է ունենում պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից, հատկապես հնչեղ գործերի դեպքում, որպիսի դրվագները, ցավոք, դեռևս բազմաթիվ են:

Ինչպես նախկինում, այնպես էլ հաշվետու ժամանակաշրջանում վերջիններիս կողմից կատարվել են հատկապես փաստաբանի գործունեությանը խոչընդոտող գործողություններ:

Նշված գործողությունների շրջանակում են, օրինակ՝ վստահորդի վերաբերյալ որոշումների չտրամադրումը փաստաբանին լիազոր մարմինների կողմից, փաստաբանի անօրինական խուզարկությունները (փորձը), անձնական տվյալների անօրինական հավաքագրումը և առգրավվումը, փաստաբանի և վստահորդի գաղտնալուծումը, ինչպես նաև առանձին անձանց կողմից փաստաբանի հասցեին հնչեցված վիրավորական արտահայտությունները, այդ թվում նաև հենց պետական ոլորտում աշխատող անձանց կողմից փաստաբանի և վստահորդի նույնացման արդյունքում, որը հաշվի առնելով վերջիններիս գործունեության նպատակները, իրավասության շրջանակները առավել քան անընդունելի են, քանի որ հենց որոշ պետական մարմինների գործառույթն է պաշտպանել անձանց, հասարակական կարգը, կանխարգելել անօրինական գործողությունները:

Տվյալ դեպքում խնդրի լուծումը բարդանում է հատկապես ոչ հնչեղ գործերի

³ Նկատի ունենալով, որ հղումում նշված նյութերի մի մասով հարուցված կարգապահական գործերը դեռևս քննության փուլում են, իսկ մյուսներով նույնիսկ հնարավոր է, որ չեն էլ հարուցվել, ուստի այս կետում նշված վարքագծի քննարկումը չի վերաբերում կոնկրետ գործերին, այլ ընդհանրական է, իսկ հղումները վերաբերում են այնքանով, որքանով առերևույթ կարող էին նման կարծիք ձևավորել հանրության շրջանում: Հաշվի է առնել նաև հղումում նշված նյութերի մասով հասարակական լայն արձագանքը:

<https://www.tert.am/am/news/2019/11/21/Sahakyan/3145955>

<https://www.civilnet.am/news/2018/06/18/Մանվել-Գրիգորյանի-փաստաբանը-հրաժարվել-է-նրա-պաշտպանությունից/339543>



դեպքում, երբ փաստաբանը՝ հանդիպելով նման վերաբերմունքի, չի բարձրաձայնում այդ մասին, իսկ գործերի ոչ հնչեղ լինելու պատճառով դրանք չեն արձանագրվում և հանրայնացվում նաև ԶԼՄ-ների կողմից: Արդյունքում շատ դեպքերում չի բացահայտվում պետական մարմինների ոչ օրինական վարքագիծը՝ անպատժելի և անհետևանք թողնելով այն:

Կապված հաշվետու ժամանակաշրջանում երկրում ընթացող և զարգացող որոշ ներքաղաքական գործընթացների, աղմկահարույց բացահայտումների և երկրում տիրող լարված իրավիճակի հետ ընդհանուր ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ ավելի քան երբևէ հասարակության որոշ խմբեր՝ տածելով ատելություն կամ վատ վերաբերմունք որևէ անձի նկատմամբ, սկսել են նույն զգացմունքները տածել և վերաբերմունքը ցուցաբերել նաև այդ անձանց փաստաբանների (պաշտպանների) նկատմամբ:

Երևույթն ավելի քան մտահոգիչ է նաև այն պատճառով, որ նման իրավիճակը դեռևս շարունակվում է և նույնիսկ որոշ ներքաղաքական գործընթացների կայունացմամբ՝ հասարակության որոշ խմբերի վերաբերմունքը դեռևս շարունակում է մնալ նույնանման, իսկ գիտակցումը, որ փաստաբանին պետք չէ նույնացնել վստահորդի հետ դեռևս առկա չէ հասարակության մի զանգվածի մոտ, դրա վառ օրինակն է հաշվետու ժամանակաշրջանում անձանց կողմից փաստաբաններին, նրանց ընտանիքի անդամներին վիրավորելը, գույքին վնաս պատճառելը, սպառնալը, որոշ դեպքերում նաև արձանագրված ատելության խոսքը զուտ սոցիալական ցանցերում գրառում կատարելու շրջանակից դուրս գալը:

Այս խնդրի առնչությամբ Փաստաբանների պալատը դեռևս **20.06.2018թ.** հանդես է եկել հրապարակային պարզաբանումներով⁴, որոնք առնչվում են հետևյալ հարցերին՝

1. Ո՞վ է փաստաբանը.
2. Ի՞նչ խնդիրների է հանդիպում փաստաբանը.
3. Ի՞նչ կլինեն, եթե չլինեն փաստաբանը.
4. Կարելի՞ է արդյոք վստահորդին և փաստաբանին նույնացնել.
5. Վստահորդի շահը.
6. Փաստաբանական գործունեությանը միջամտելու անթույլատրելիությունը.
7. Արդարադատություն:

Փաստաբանների պալատը նշված հարցերը պարզաբանելու արդյունքում՝

⁴ <http://advocates.am/news/view/2076.html>



Ա. քաղաքացիներին կոչ էր արել՝

- հարգել փաստաբանի մասնագիտական աշխատանքը.

- չնույնացնել փաստաբանին իր վստահորդի հետ.

- փաստաբանի վարքագծում առերևույթ խախտումներ նկատելու դեպքում, զերծ մնալ փաստաբանին վիրավորելու, սպառնալու կամ այլ անօրինական գործողություններից՝ փաստաբանի վարքագծի քննարկման հարցով դիմելով ՀՀ փաստաբանների պալատին:

Բ. Փաստաբաններին հորդորել էր՝

- մասնագիտական գործողություններից դուրս վարքագծով չնույնացվել վստահորդների հետ.

- համարձակ և անկաշկանդ կատարել փաստաբանի մասնագիտական աշխատանքը՝ ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ. №Rec(2000)21 հանձնարարականը պետություններին կոչ է անում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հարգվի, պաշտպանվի և խթանվի փաստաբանի մասնագիտական գործունեության ազատությունն առանց խտրականության և իշխանությունների կամ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ կողմից անհրավաչափ միջամտության, հատկապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթների լույսի ներքո:

Փաստաբանների նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքն ըստ էության արձանագրվել է նաև գործադիր իշխանության ներկայացուցչի կողմից: ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը **07.08.2018թ.** հրապարակային կարգով նշել է՝ «...Հարկ է ընդգծել նաև, որ անթույլատրելի է պաշտպանի նույնացումը վստահորդին: Հայաստանի Հանրապետությունում գործում է անձնական պատասխանատվության սկզբունքը, այսինքն՝ որևէ այլ անձ չպետք է կրի մեղսագրվող արարքից բխող բացասական հետևանքները: Ուստի՝ պետք է բացառել փաստաբանների դեմ ուղղված արելության այիքն ու խոսքը, ինչը պայմանավորված է, ընդամենն, օրենքով հանրության անունից իրենց վրա դրված պարտականությունները կատարելով: Կառավարությունը կարևորում է փաստաբանների մասնագիտական գործունեության առանձնահատուկ դերը ժողովրդավարական հասարակություն կերտելու ճանապարհին և հայտնում է, որ այդ դերից բխող գործունեությանը խոչընդոտելը խաթարում է արդարադատության բուն էությունը:⁵»:

⁵ <http://advocates.am/news/view/2102.html>



Այս տեսակետից հարկ է նկատել, որ ինքն իրեն վստահորդի հետ նույնացնող փաստաբանն էլ պետք է գիտակցի, որ մասնագիտական շեմը հատելու դեպքում խոցելի է դառնում ոչ մասնագիտական զգացմունքների և դատողությունների համար:

* * *

3. Ամփոփում և առաջարկներ.

Ամփոփելով վերոնշյալը՝

1. **Փաստաբաններին կոչ ենք անում** ավելի հաճախ դիմումներ ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատ և իրավասու մարմիններ՝ բացահայտելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, այդ թվում նաև դատավորների չարաշահումների, անօրինական գործողությունների յուրաքանչյուր դեպքի մասին՝ անկախ դրա ծանրությունից, հանրային վտանգավորության աստիճանից կամ հետևանքներից.

2. **Փաստաբաններին կոչ ենք անում** սատարել միմյանց և համապատասխան առաջարկություններով հանդես գալ պետական մարմիններում, այդ թվում նաև միասնական ուժերով օրենքով չարգելված ցանկացած եղանակներով հակազդել փաստաբանի նկատմամբ կատարված անօրինական գործողություններին.

3. **Առաջարկվում է Փաստաբանների պալատի աշխատակազմին Փաստաբանների պալատի խորհրդի հավանությամբ շրջանառության մեջ դնել խորհրդատվական ուղեցույց**, որը կպարունակի դրույթներ փաստաբանի կողմից իր գործի հանրայնացման ժամանակ՝ փաստաբան-վստահորդ նույնացվելուց խուսափելու մասին, որպեսզի պահպանվեն մասնագիտական շփման կանոնները և փաստաբանը չնույնացնի իրեն իր վստահորդի հետ կամ կարողանա առնվազն այդ սահմանների շրջանակում պահպանել փաստաբան-վստահորդ հարաբերություններն այլ անձանց առջև:

4. **Կոչ ենք անում պետական մարմիններին** միջոցներ ձեռնարկել (այդ թվում՝ կոշտ արձագանքել իրենց ենթակայության տակ գտնվող մարմինների կամ պաշտոնատար անձանց ոչ օրինական վարքագծին) փաստաբան-պետական մարմին հարաբերություններում առկա խնդիրները նվազագույնի հասցնելու ուղղությամբ՝ բարձրացնելով միմյանց նկատմամբ հարգանքը:

5. **Կոչ ենք անում Կառավարությանը** սոցիալական գովազդների, հոլովակների, հաղորդաշարերի և այլ հանրային միջոցառումներով նպաստել հասարակության իրավագիտակցության բարձրացմանը՝ փաստաբանության ինստիտուտի նկատմամբ հարգանք ձևավորելու նպատակով:

6. **Կոչ ենք անում օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններին** օրենսդրական նախաձեռնության կարգով երաշխիքներ սահմանել



փաստաբանների մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու, փաստաբանի ընտանիքի անդամներին սպառնալու, փաստաբանին՝ մասնագիտական գործունեության իրականացման առնչությամբ վիրավորելու կամ զրպարտելու արարքներից պաշտպանելու համար:

* * *

4. Աղբյուրներ.

1. ՀՀ փաստաբանների պալատի 17.02.2020թ. տեղեկանք՝ 2018թ. հունվարի 1-ից առ 2020թ. փետրվարի 10-ն ընկած ժամանակահատվածում փաստաբանների իրավունքների պաշտպանության հետ կապված ՀՀ փաստաբանների պալատի կողմից կատարված գործողությունների մասին.
2. <http://arm.favl.am/?p=2139>.
3. <http://www.aaeurop.com/?p=21288>.
4. https://arminfo.info/full_news.php?id=30757&lang=1.
5. <https://armeniasputnik.am/society/20190114/16750981/manvel-grigoryani-pastabani-het-kapvac-mijadepy-anynduneli-e.html>.
6. <https://armeniasputnik.am/video/20190111/16698811/video-cucararnery-chein-toxnum-general-manveli-pastabany-herana.html>.
7. <https://armeniasputnik.am/society/20190115/16771316/pastabanneri-pshtpanutyam-hamar-orenqi-popoxutyunneri-naxagic-e-mshakvum.html>.
8. https://www.azatutyun.am/a/29713496.html?fbclid=IwAR2Gspl5hWjTEhd-PEyKXMs86wolf-guCf_iqAmok1_2qLskRQb8Rwz5HM4.
9. <https://www.tert.am/am/news/2019/11/21/Sahakyan/3145955>.
10. <https://armtimes.com/hy/article/161816>.
11. <https://www.pastinfo.am/hy/news/2018/08/05/Ռոբերտ-Քոչարյանի-փաստաբաններին-սպառնում-են-իշխանական-օղակները-չեն-շտապում-արձագանքել/728631>.
12. <https://168.am/2018/06/30/975367.html>.
13. <https://armlur.am/808858/>.
14. <https://lurer.com/?p=291232&l=am>.
15. <https://www.civilnet.am/news/2018/06/18/Մանվել-Գրիգորյանի-փաստաբանը-հրաժարվել-է-նրա-պաշտպանությունից/339543>.
16. <https://www.facebook.com/levon.sahakyan.85/posts/2631020120350492>.
17. <https://www.pastinfo.am/hy/news/2018/06/05/հայիդյախառն-երկխոսություն-Փաստաբան-Տիգրան-Աթանեսյանի-և-ակտիվիստների-միջև-«Հրապարակ»/703958>.



18. <http://advocates.am/news/view/2076.html>.
19. <http://advocates.am/news/view/2102.html>.

* * *